

Տոմսերի մուտքագրում եսի համակարգ և քննության անցկացման ուղեցույց


Եսի համակարգում քննությունների անցկացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

1. [Տոմսերը դարձնել pdf Ֆորմատի,](#)
2. [Մուտքագրել տոմսերը եսի համակարգ,](#)
3. [Բացել քննական տեղեկագիրը,](#)
4. [Հնարել տոմսը,](#)
5. [Լրացնել տեղեկագիրը:](#)

Տոմսերի ֆորմատի փոխում (pdf)


Եսի համակարգում տոմսերի մուտքագրման համար նախ անհրաժեշտ է տոմսերը պահպանել pdf ֆորմատի առանձին ֆայլերով: Դրա համար առկա ամենահարմար տարբերակներն են.

- Առանձնացնել MS Word փաստաթղթում յուրաքանչյուր տոմսը և պահպանման ժամանակ Save as type-ում ընտել PDF տարբերակը և պահպանել ֆայլը (նկ. 1), այս կետը հնարավոր է կատարել այն դեպքում, երբ համակարգչում տեղադրված MS Word-ի տարբերակը 2010 կամ ավելի բարձր է: Ֆայլերի անվանումները պետք է լինեն տոմսի համարներով, օրինակ [1.pdf](#), [2.pdf](#) և այլն:




Նկ. 1. Ֆայլի պահպանում pdf ֆորմատով


- MS Word փաստաթղթում տոմսերը դնել առաձին էջերում և յուրաքանչյուր էջը տպել doPDF տարբերակով, դրա համար պետք է ընտրել տպիչը (նկ. 2), ընտրել ակտիվ էջը (նկ. 3, կարմիր շրջանակ), սեղմել Print կոճակը (նկ. 3, կանաչ շրջանակ) այնուհետև բացվող պատուհանում ընտրել տոմսի պահպանման վայրը (նկ. 4, կարմիր շրջանակ), ֆայլի անվանումը դնել տոմսի համարով և սեղմել «Ok» կոճակը (նկ. 4, կանաչ շրջանակ):



Նկ. 2. Տպելու պահին տպիչի փոխում pdf ֆորմատ դարձնելու համար



Նկ. 3. Ֆայլի էջերի փոխակերպում pdf ֆորմատով




Նկ. 4. Ֆայլի էջերի փոխակերպում pdf ֆորմատով

Կատարելով նշված գործողությունը յուրաքանչյուր տոմսի համար, կունանանք բոլոր տոմսերը pdf ֆորմատով:


Տոմսերի մուտքագրում ebus համակարգ

Տոմսերի մուտքագրման համար պետք է մտնել «Աշխատակից» մոդուլի «Տոմսերի մուտքագրում» ենթամոդուլը (նկ. 5):



Նկ. 5. Անցում դեպի «Աշխատակից» մոդուլի «Տոմսերի մուտքագրում» ենթամոդուլ

Որոնման ցանկում ընտրել ուստարին, կիսամյակը, կրթական աստիճանը և ուսուցման ձևը, այնուհետև պետք է սեղմել «Որոնել» կոճակը (նկ. 6, **կարմիր շրջանակ**) և անցնել «Տոմսերի մուտքագրում» էջ:




Նկ. 6. Կուրսի ընտրման էջը

Բացված էջում արտապատկերվում է տվյալ դասախոսի դասավանդվող կուրսերը (մասնագիտություններով) և առարկաները: Անհրաժեշտ է կատարել նշում մուտքագրվող տոմսերի մասնագիտության դիմաց (նկ. 6, [կանաչ շրջանակ](#)):


Տոմսերի ֆայլերի անունները պետք է նախապես դրված լինի տոմսերի համարներով: Օրինակ. 1-ին տոմսը՝ **1.pdf**, 2-րդը՝ **2.pdf** և այլն:

Նշվածից ներքև առկա է «Կցել տոմսերը» աղյուսակ: «Choose File»-ի միջոցով անհրաժեշտ է ընտրել տոմսերի ֆայլերը (բացվում է MS Windows-ի ստանդարտ «Open» պատուհանը, բոլոր տոմսերն ընտրելուց հետո (բոլոր տոմսերն արագ ընտրելու համար պետք է սեղմել Ctrl+A) անհրաժեշտ է սեղմել «Open» կոճակը (նկ. 7):



Նկ. 7. Տոմսերի ընտրման էջը

Կցել տոմս այունակում արտապատկերված կլինի կցված տոմսերի քանակը և files բառը (նկ. 8). տոմսերի խմբակային մուտքագրման դեպքում «Տոմսի համարը» այունակը չի լրացվում: Այնուհետև անհրաժեշտ է սեղմել «Հաստատել» կոճակը:



Նկ. 8. Տոմսերի մուտքագրման էջը


Արդյունքում բոլոր տոմսերը մուտքագրված կլինեն համակարգ:

«Տոմսերի ցուցադրում» էջում արտապատկերված են այն դասընթացների անվանումները, որոնց համար մուտքագրված են տոմսեր, ինչպես նաև երևում է յուրաքանչյուր դասընթացի համար մուտքագրված տոմսերի քանակները: «Խմբագրել/հեռացնել» այունակում խմբագրման նշանը առկա է լինում միայն տվյալ դասախոսի դասընթացի դիմաց (նկ. 9):

h/h	Կրթական աստիճան	Մասնագիտություն	Առարկա	Կուրսը	Տոմսի քանակը	Խմբագրել/հեռացնել
1	Բակալավրի կրթական աստիճան	Բույսերի պաշտպանություն	Խաղողագործություն	4	17	
2	Բակալավրի կրթական աստիճան	Ագրոէկոլոգիա	Բանջարաբուծություն	3	20	
3	Բակալավրի կրթական աստիճան	Ագրոբիզնես	Բուսաբուծական արտ. ապրանքագիտ. և ստանդարտացում	2	20	
4	Բակալավրի կրթական աստիճան	Բույսերի պաշտպանություն	Ագրոքիմիա	3	14	
5	Բակալավրի կրթական աստիճան	Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում	Բնափայտագիտություն և փայտի ապրանքագիտություն	6	6	
6	Բակալավրի կրթական աստիճան	Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում	Լանդշաֆտային դիզայն	6	6	
42	Բակալավրի կրթական աստիճան	Մասնաբուժություն	Չամաճարակ. և ինֆեկցիոն հիվանդություններ-4	5	23	
43	Բակալավրի կրթական աստիճան	Մասնաբուժական սանիտարական փորձաքննություն	Չամաճարակ. և ինֆեկցիոն հիվանդություններ-4	5	18	
44	Բակալավրի կրթական աստիճան	Մասնաբուժական սանիտարական փորձաքննություն	Մասնաբուժական սանիտարական փորձաքննություն-2	6	18	
45	Բակալավրի կրթական աստիճան	Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն	Ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	2	15	
46	Բակալավրի կրթական աստիճան	Ագրոէկոլոգիա	Ընդհանուր էստոմոլոգիա-2	4	14	
47	Բակալավրի կրթական աստիճան	Ագրոէկոլոգիա	Բույսերի ֆիզիոլոգիա կենսաքիմիայի հիմունքներով	2	20	
48	Բակալավրի կրթական աստիճան	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Բույսերի ֆիզիոլոգիա կենսաքիմիայի հիմունքներով	2	20	

Նկ. 9. Մուտքագրված տոմսերի ցանկ

Մեղմելով խմբագրման կոճակի վրա կրացվի տոմսերի մուտքագրման էջը՝ յուրաքանչյուր տոմսը առանձին տողում գրված (նկ. 10):




Նկ. 10. Տոմսերի մուտքագրման/խմբագրման էջը

Մեղմելով տոմսի վրա առանձին էջում կցուցադրվի տվյալ տոմսը: Եթե մուտքագրման ժամանակ եղել են սխալներ, նկ. 10-ում ցուցադրված էջում, հնարավոր է ջնջել տոմսը և ավելացնել նոր տոմս, բայց այս դեպքում անհրաժեշտ է գրել տոմսի համարը, կամ պետք է ջնջել բոլոր տոմսերը և կրկին խմբակային մուտքագրել:

Քննական տեղեկագիր

Քննական տեղեկագրերը բացելու համար պետք է մտնել «Առաջադիմություն» մոդուլի «Տեղեկագրեր» ենթամոդուլը (նկ. 9):



Նկ. 9. Անցում դեպի «Առաջադիմություն» մոդուլի «Տեղեկագրեր» ենթամոդուլ

Բացվող էջում ընտրել քննության կուրսը (նկ. 10):




Նկ. 10. Քննության կուրսի ընտրում

Նկ. 10-ում պատկերված կուրսերի ցանկից սեղմելով համապատասխան կուրսի վրա, կբացվի այդ կուրսի տեղեկագիրը:


Տոմսի ընտրում

Քննական տեղեկագրում ավելացված է մեկ սյունակ՝ «Ընտրել տոմս», որի մեջ առկա է յուրաքանչյուր ուսանողի համար հղում դեպի տոմսի ընտրման էջ և էջի թարմացման կոճակ (նկ. 11):




Նկ. 11. Քննության տեղեկագիրը

Այսքանից հետո անհրաժեշտ է էկրանը միացնել, որպեսզի ուսանողները տեսնեն, թե ինչպես է ընտրվելու իրենց տոմսը (նկ. 12):




Նկ. 12. Էկրանի ցուցադրում բոլորին

Այնուհետև անհրաժեշտ է սեղմել 1-ին ուսանողի «Ընտրել տոմս»-ի վրա, որից հետո կբացվի նոր էջ (նկ. 13), որում առկա է ուսանողի ազգանուն, անունը, առարկայի անվանումը, տոմսի գեներացման կոճակը և տոմսերի ավտոմատ ընտրման պտուտակը:




Նկ. 13. Տոմսերի ընտրման էջ

Տոմսի համարն ընտրվելուց հետո էկրանի աջ մասում երևում է ընտրված տոմսի համարը, ցուցադրման և հաստատման համար նախատեսված կոճակները: Այնուհետև անհրաժեշտ է սեղմել «Ցուցադրել տոմսը» կոճակի վրա (նկ. 14, կարմիր շրջանակ) և էկրանին կհայտնվի տվյալ տոմսը (նկ. 15):



Նկ. 14. Տոմսերի ընտրման էջ տոմսի համարն ընտրվելուց հետո



Նկ. 15. Ընտրված տոմսի ցուցադրում

Ուսանողը պետք է էկրանին պատկերվածը նկարի կամ պահպանի (Screen shot) տոմսը: Եթե անհրաժեշտություն կա տոմսը փոխելու, ապա անհրաժեշտ է սեղմել «Նորից պտտել» կոճակի վրա (նկ. 14, [կապույտ շրջանակ](#)): Իսկ եթե ամեն ինչ նորմալ է, անհրաժեշտ է սեղմել «Հաստատել» կոճակի վրա (նկ. 14, [կանաչ շրջանակ](#)):

«Հաստատել» կոճակի սեղմումից հետո փակվում է տոմսի համարի ընտրման էջը և վերադառնում է տեղեկագրի էջին, սակայն դեռևս ընտրված տոմսի համարը չի արտապատկերվում ուսանողի անվան դիմաց, արտապատկերման համար անհրաժեշտ է սեղմել թարմացման կոճակի վրա (նկ. 11, [կանաչ շրջանակ](#)), որից հետո ուսանողի անվան դիմաց կգրվի ընտրված տոմսի համարը (նկ. 16):

Այնուհետև նույն գործողությունը պետք է կատարել մնացած ուսանողների համար:

Տեղեկագրի լրացում

Տեղեկագրի լրացման համար անհրաժեշտ է լրացնել դատարկ դաշտերը (նկ. 16), մնացածը լրացվում են ավտոմատ:

ՔՆՆԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՎԱՌՐՈՒՄ
ՔՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ N _____
2019 - 2020 թթ. ՈՒՍ ՏԱՐԿԱ 2 ԿԻՍԱՄՅԱԿ

Ֆակուլտետ	Ազգրիզելենի և տնտեսագիտության
Մասնագիտություն	Սպրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն_կուրս 1_հոսք 1
Մասրկա	Մենդամթեքի կառավարման կողմից
Դասախոսների ազգանունը, անունը	Ալեքսանյան Վարդյան, Սազարյան Սիլվա

Ձ/Ձ	Ուսանողի ազգանունը, անունը	Ընտրել տոմս	Ստուգման գրքի համարը	Կրթիչի անունը	Գնահատման գործոնները (%) և դրանց փաստացի ստացած միավորը 100 միավորային համակարգով*						Բազմագործոնային համակարգով հաշվեկշռված գնահատականը				
					Համախառն		Ինքնուրույն աշխատանք	Ամփոփ քննություն (≥40)	Չնդիմադրված	Ամբողջ տոմս (Σ)	100 միավորային համակարգով	20 միավորային համակարգով	Տասարկն համակարգով (A++-D)	Նշումներ	
					Բաց քան.	Համախառն									
					36	20	30	50							
1	Բարուբեյրյան Ինեսա Կարենի	Տոմս N 2	ՄԱ-19046	3	0	100	90	95	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	95	20	A+		
2	Կեվելյան Էլյա Գրիշայի	Տոմս N 7	ՄԱ-19047	3	0	100	80	80	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	84	18	A-		
3	Իովիաննիսյան Մարիամ Միհրանի	Տոմս N 4	ՄԱ-19048	3	0	100	50	60	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	65	14	B-		

Պահպանել

Ուղարկել

Նկ. 16. Տեղեկագրի լրացում

Տեղեկագիրը լրացնելուց հետո պետք է պահպանել այն (սեղմել «Պահպանել» կոճակը), իսկ քննությունը վերջնական ավարտվելուց հետո, այլևս տեղեկագրի մեջ ոչինչ լրացնելու կարիք չկա պետք է սեղմել «Ուղարկել» կոճակը (այս կոճակը սեղմելուց հետո տեղեկագրում փոփոխություն անել հնարավոր չի լինի):